ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 112817181-3
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՔՍՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի 30 հունվարի 2019 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետին փոխարինող Վ. Գրիգորյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Բաժանորդ), մի կողմից, և <<ՎԵՈՆ Արմենիա>> ՓԲԸ-ն, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 լիցենզիայի, (այսուհետ՝ Օպերատոր) ի դեմս լիազորված անձ՝ Լիլիթ հովհաննիսյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով 2013 թվականի օգոստոսի 02 -ին կնքված N: 112817181 պետության կարիքների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 6.3 և 6.4 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Օպերատորը պարտավորվում է Պայմանագրով և սույն համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Բաժանորդին մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրա համար

2. Սույն համաձայնագիրը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.Սույն Համաձայնագիրը բաղկացած է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԲԱԺԱՆՈՐԴ	ՕՊԵՐԱՏՈՐ
ՀՀ Շիրակի մարզպետարան	<<Վեոն Արմենիա>> ՓԲԸ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	ք. Երևան, Ահարոնյան 2
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 163004038879
Հ/Հ 900211205027	ՀՎՀՀ 02500052
ՀՎՀՀ 05507437	
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ 2 «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԴՐՈՇՄԱԿՆԻՇ ՀԱՍԳ «ԳՅՈՒՄՐԻ»
STAMP SSO "GYUMRI"
34733/TANN 02500052
REPUBLIC OF ARMENIA YEREVAN AHARONYAN 2
"VEON ARMENIA" CLOSED JOINT STOCK COMPANY